ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Արվե«Կերպարվեստ», Երաժշտություն», Ֆիզկուլտուրա», Առողջ ապրելակերպ և անվտանգ կեսագործունեություն» առարկաների առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի սեպտեմբերի 29-ին: Նիստին մասնակցել են մասնախմբի բոլոր 14 անդամները:
Մասնակցողների անուն, ազգանուն

1. Մարգարիտա Հակոբջանյան
2. Լուսինե Հովիաննիսյան
3. Հայարփի Մինասյան
4. Արևիկ Խաչատրյան
5. Տատյանա Սարգսյան
6. Հասմիկ Հակոբյան
7. Հասմիկ Ավանեսյան
8. Սոնա Պողոսյան
9. Քնարիկ Խաչատրյան
10. Սուսաննա Գորգինյան
11. Արմինե Նիկողոսյան
12. Ալմաստ Մելքոնյան
13. Լուսինե Խաչատրյան
14. Նորա Վարդերեսյան

Օրակարգում՝

1. Մեթոդական միավորման նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Մ. Հակոբջանյան)
2. Նախորդ մեթոդմիավորման նիստի որոշումների կատարման մասին քննարկում (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Մ. Հակոբջանյան)
3. Սովորողների անհատական ուսուցման պլանների քննարկում և ըստ անհրաժեշտության՝ առաջարկությունների ներկայացման հարցը (զեկուցող՝ ՄՄ ղեկավար Մ. Հակոբջանյան)
4. Հոկտեմբեր ամսվա ուսումնականամեթոդական և ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորում:
5. Ֆիզիկական կուլտուրայի նոր ուսուցչի ներկայացում, նրան հատկացվող դասարանների և աշխատանքների կազմակերպման հետ կապված հարցերի քննարկում:
6. Ֆիզկուլտուրա առարկայի դասավանդման և ուսումնառության որակի ուսումնասիրության շրջանակում տարրական օղակում դասալսումների կազմակերպման և իրականացման հարցը:

ԼՍԵՑԻՆ 1

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց 2026 թվականի սեպտեմբերի 29-ին նախատեսված մեթոդական միավորման նիստի օրակարգի նախագիծը՝ ներառված վեց հարցերով, զեկուցողներով և քննարկման հիմնական ուղղություններով:

Նշվեց, որ օրակարգը կազմվել է՝ հիմք ընդունելով մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանը, ուսումնական գործընթացի կազմակերպման առաջնահերթությունները, նախորդ նիստերի որոշումները և ընթացիկ ուսումնական խնդիրները:

ԼՍԵՑԻՆ 2

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց նախորդ՝ 2026 թվականի սեպտեմբերի 4-ի նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման ընթացքը՝ անդրադառնալով օրակարգային հարցերից բխող աշխատանքների իրականացմանը:

Ներկայացվեց առարկայական թեմատիկ պլանների մշակման, քննարկման և վերջնականացման գործընթացը: Նշվեց, որ թեմատիկ պլանների՝ ԴԿՏՀ համակարգ մուտքագրման գործընթացը դեռևս

ամբողջությամբ ավարտված չէ՝ համակարգի տեխնիկական խնդիրների և որոշ ուսուցիչների հաշիվների հասանելիության հետ կապված դժվարությունների պատճառով: Կարևորվեց թեմատիկ պլանների մուտքագրման աշխատանքների ավարտը մինչև հոկտեմբերի առաջին շաբաթը՝ ապահովելով դրանց ամբողջականությունն ու համապատասխանությունը ներկայացվող պահանջներին:

ԼՍԵՑԻՆ 3

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ սովորողների անհատական ուսուցման պլանների կազմման և իրականացման վերաբերյալ: Քննարկվեցին սովորողների անհատական հնարավորություններին և կրթական կարիքներին համապատասխան ուսուցման նպատակների, խնդիրների և նախատեսվող աշխատանքների հստակեցման հարցերը:

ՄՄ անդամների կողմից ներկայացվեցին անհրաժեշտ առաջարկություններ՝ պլանների առավել նպատակային և արդյունավետ կազմակերպման վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ 4

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց հաջորդ ամսվա ուսումնականամեթոդական և ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման նախատեսվող ուղղությունները: Նշվեց, որ ուսումնական առարկաների դասավանդման և սովորողների ուսումնառության որակի բարելավման նպատակով նախատեսվում է ՄՄ ղեկավարի կողմից անցկացնել «Ուսումնական առարկաների դասավանդման և սովորողների ուսումնառության որակի բարելավում» թեմայով սեմինար՝ ուղղված ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը և արդյունավետ մեթոդական մոտեցումների կիրառման խթանմանը:

Անդրադարձ կատարվեց նաև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման կազմակերպման և անցկացման նախապատրաստական աշխատանքներին: Ներկայացվեց միջոցառման ծրագիրը, քննարկվեցին մասնակիցների ներգրավման, թիմերի ձևավորման, անհրաժեշտ մարզագույքի ապահովման և կազմակերպչական այլ հարցեր: ՄՄ անդամները ներկայացրին առաջարկություններ՝ միջոցառման ընթացքը առավել կազմակերպված և հետաքրքիր դարձնելու վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ 5

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց ֆիզիկական կուլտուրայի նոր ուսուցչուհի Նորա Վարդերեսյանին: Քննարկվեցին նոր ուսուցչուհուն հատկացվող դասարանների, դասաժամերի բաշխման և աշխատանքային գործընթացում ներգրավման հետ կապված հարցերը:

Քննարկվեցին նրան հատկացվող դասարանների, դասաժամերի բաշխման և աշխատանքային գործընթացում ներգրավման հետ կապված հարցերը: Նշվեց, որ Նորա Վարդերեսյանը ֆիզիկական կուլտուրա է դասավանդելու $4^{Դ}$, $5^{Ա}$, $5^{Բ}$, 5Գ, $6^{Ա}$, $6^{Բ}$, $6^{Գ}$, $7^{Ա}$, $7^{Բ}$, $7^{Գ}$, $8^{Ա}$, $8^{Բ}$, $8^{Գ}$ և $9^{Ա}$ դասարաններում՝ համապատասխանաբար յուրաքանչյուր դասարանում 2 ժամ, իսկ $9^{Ա}$ դասարանում՝ 3 ժամ շաբաթական:

ԼՍԵՑԻՆ 6

Մեթոդական միավորման ղեկավար Մ. Հակոբջանյանը ներկայացրեց ֆիզկուլտուրա առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրության և սկսնակ ուսուցչին մեթոդական աջակցություն ցուցաբերելու նպատակով տարրական օղակում նախատեսվող դասալսումների իրականացման հարցը: Նշվեց, որ դասալսումների ընթացքում ուշադրություն կդարձվի դասերի պլանավորմանը, կազմակերպմանը, կիրառվող մեթոդներին և ուսումնական գործընթացի արդյունավետությանը: Դասալսումներն իրականացվելու են սահմանված ժամանակացույցով:

N	Ուսուցչի անուն, ազգանուն	Ամսաթիվ	Առարկա	Դասարան	Դասաժամ
1	Քնարիկ Խաչատրյան	12.10.2026	Ֆիզկուլտուրա	$2^{Գ}$	2-րդ
2	Սոնա Պողոսյան	13.10.2026	Ֆիզկուլտուրա	$2^{Ա}$	1-ին
3	Հասմիկ Ավանեսյան	14.10.2026	Ֆիզկուլտուրա	$1^{Բ}$	4-րդ

4	Արևիկ Խաչատրյան	15.10.2026	Կերպարվեստ	4[բ]	5-րդ
5	Նորա Վարդերեսյան	16.10.2026	Ֆիզկուլտուրա	7[ա]	3-րդ

Կարևորվեց նաև սովորողների մասնակցության և ներգրավվածության, դասի նպատակների իրականացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում արդյունավետ փորձի կիրառման դիտարկումը:

Լսելով 2026 թվականի սեպտեմբերի 29-ի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ զեկուցումները և քննարկելով ներկայացված հարցերը՝ մեթոդական միավորումը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել մեթոդական միավորման նիստի օրակարգը՝ ներկայացված վեց հարցերով և նախատեսված քննարկման ուղղություններով:
2. Հիմք ընդունելով ՄՄ ղեկավարի զեկույցը նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ՝
   2.1. ԴԿՏՀ համակարգում թեմատիկ պլանների մուտքագրման գործընթացը համարել թերի կատարված՝ հաշվի առնելով համակարգում առկա տեխնիկական խնդիրները, որոշ ուսուցիչների հաշիվների հասանելիության բացակայությունը, ինչպես նաև համակարգ մուտք գործելու հնարավորություն ունեցող ուսուցիչների կողմից թեմատիկ պլանների լրացման ընթացքում առկա թերությունները:
   2.2. Թեմատիկ պլանների մուտքագրումն ավարտել մինչև 2026 թվականի հոկտեմբերի 10-ը՝ ապահովելով սահմանված պահանջներին համապատասխան լրացումը և առկա թերությունների շտկումը:
3. Ուսումնական գործընթացը կազմակերպել՝
   - հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի անհատական կրթական կարիքները, կարողությունները և ուսումնառության առանձնահատկությունները,
   - պարբերաբար դիտարկելով ԱՈՒՊ-ներով նախատեսված աշխատանքների ընթացքը, արձանագրել սովորողների առաջընթացը և գնահատել սահմանված նպատակների իրագործման աստիճանը,
   - անհրաժեշտության դեպքում, սովորողների առաջընթացի դիտարկման արդյունքների և ՄՄ անդամների առաջարկությունների հիման վրա, ներկայացնելով ԱՈՒՊ-ներում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու առաջարկություններ:
4. Ընդունել ի գիտություն ՄՄ ղեկավարի կողմից հոկտեմբերին «Ուսումնական առարկաների դասավանդման և սովորողների ուսումնառության որակի բարելավում» թեմայով սեմինարի անցկացումը:
5. «Սպորտլանդիա» մարզական միջոցառման կազմակերպումն ու անցկացումը հանձնարարել 4-րդ Ա, Բ, Գ, Դ դասարաններում ֆիզիկական կուլտուրա դասավանդող ուսուցիչներին՝ այն իրականացնելով տվյալ դասարանների սովորողների մասնակցությամբ: Նախապատրաստական աշխատանքներն իրականացնել սահմանված ժամկետներում՝ ապահովելով սովորողների ակտիվ մասնակցությունը, թիմերի ձևավորումը, անհրաժեշտ մարզագույքի նախապատրաստումը և միջոցառման պատշաճ կազմակերպումն ու անցկացումը:
6. Կազմակերպել ֆիզկուլտուրա առարկայի դասալսումներ տարրական օղակում՝ առարկայի դասավանդման դրվածքն ուսումնասիրելու և սկսնակ ուսուցչիներին մեթոդական աջակցություն ցուցաբերելու նպատակով: Դասալսումների ընթացքում ուշադրություն դարձնել դասերի պլանավորմանը, կազմակերպմանը, կիրառվող մեթոդներին և սովորողների ներգրավվածությանը:
7. Հավանության արժանացնել մեթոդական միավորման ղեկավարի ներկայացրած՝ ֆիզկուլտուրա առարկայի դասավանդման դրվածքի ուսումնասիրության և սկսնակ ուսուցչին մեթոդական աջակցություն ցուցաբերելու նպատակով դասալսումների իրականացման ժամանակացույցը և առաջարկությունները.
   7.1. Իրականացնել «Ֆիզկուլտուրա» առարկայի դասալսումներ 1-ին, 2-րդ դասարաններում:

7.2. Դասալսումների ընթացքում ուսումնասիրել ֆիզկուլտուրա առարկայի դասավանդման դրվածքը և ապահովել սկսնակ ուսուցչին մեթոդական աջակցության ցուցաբերումը:

7.3. Քննարկել դասալսումների և անհատական վերահսկողության արդյունքները համապատասխան ուսուցիչների հետ և, անհրաժեշտության դեպքում, տրամադրել մեթոդական աջակցություն:

Արվեստ և արհեստ, Ֆիզիկական կրթություն և առողջ, անվտանգ կենսագործունեություն առարկաների առարկայական մասնախմբի ղեկավար՝ ——————————— **Մ. Հակոբջանյան**

Քարտուղար՝ ——————————— **Լ. Հովհաննիսյան**

02.10.2026